ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N1

ք. Երևան *«29» օգոստոսի 2025թ.*

«Միթի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը /այսուհետ՝ նաև *«Կողմ 1»*/, ի դեմս տնօրեն Վ. Ֆարմանյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից և **Ջրվեժի համայնքապետարանը** /այսուհետ նաև *«Կողմ 2»*/, ի դեմս համայնքի ղեկավար Նորայր Սանթրոսյանի, ով գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից,

հաշվի առնելով, որ Կողմ 2-ը ցանկանում է այսուհետ հանդիսանալ Երևան սիթի առևտրի օբյեկտի քարտապան/ներ/ և ապահովել Կողմերի միջև գոյություն ունեցող հարաբերությունների բնականոն ու անխաթար զարգացումը և հայտնել իր պատրաստակամությունը ձեռնարկելու իրենից կախված բոլոր հնարավոր ողջամիտ քայլերը Պայմանագրի նպատակներին հասնելու և դրա շրջանակներում անհրաժեշտ փաստացի և/կամ/ իրավաբանական գործողությունների իրականացման համար, կնքեցին սույն պայմանագիրը /այսուհետ՝ նաև «Պայմանագիր»/ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Կողմ 1-ը պարտավորվում է Պայմանագրով սահմանված գումարը ստանալուց հետո, Կողմ 2-ին տրամադրել ՍԻԹԻ ՍՊԸ-ի սեփականությանը հանդիսացող քարտեր /այսուհետ նաև՝ *«Քարտ»*/, ստորև նշված անվանական արժեքներով և քանակներով, իսկ Կողմ 2-ը պարտավորվում է այդ Քարտերի միջոցով մանրածախ առևտուր իրականացնել միայն Կողմ 1-ի կողմից շահագործվող Երևան սիթի առևտրի օբյեկտներից:

Անվանական արժեք	*Քանակ*	*Գումար*
30 000 ՀՀ դրամ	*25*	*750 000 ՀՀ դրամ*

1.2. Կողմ 2-ը պարտավորվում է պայմանագիրը կնքելուց հետո Պայմանագրով սահմանված գումարի չափով կատարել կանխավճար, որի հիման վրա միայն կողմ 1-ը կարող է Քարտերը ակտիվացնել և տրամադրել վերջինիս:

2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

2.1. *<u>Կողմ 1-ը իրավունք ունի</u>.*

2.1.1. Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո Կողմ 2-ին պահանջել իր առևտրի օբյեկտներից կողմ 2-ի կողմից գնումներ կատարելու համար կատարել կանխավճար:

2.1.2. միակողմանիորեն լուծել սույն պայմանագիրը՝ այդ մասին 15 օր առաջ ծանուցելով Կողմերին:

2.2. *<u>Կողմ 1-ը պարտավոր է</u>.*

2.2.1. Կողմ 2-ին թույլատրել կատարել գնումներ իր բոլոր առևտրի օբյեկտներից,

2.2.2. Կանխավճարը ստանալուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում Քարտը ակտիվացնել, որից հետո միայն Կողմ 2-ը կկարողանա գնումներ կատարել «Երևան սիթի» առևտրի կենտրոններից,

2.3. ***<u>Կողմ 2-ը իրավունք ունի</u>.***

2.3.1. Եթե Կողմ 1-ը հրաժարվում է Կողմ 2-ին հանձնել վաճառված Ապրանքը, ապա հրաժարվել Պայմանագիրը կատարելուց,

2.3.2. Պահանջել Կողմ 1-ին Կողմ 2-ի կողմից կանխավճարը կատարելուց հետո Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում ակտիվացնել Քարտը,

2.4. ***<u>Կողմ 2- պարտավոր է</u>.***

2.4.1. ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները Քարտի կորուստը կամ անօրինական օգտագործումը կանխելու համար,

3. Պայմանագրի գինը և վճարման կարգը

3.1. Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո Կողմ 2-ը պարտավորվում է կատարել 180 000 ՀՀ դրամի չափով կանխավճար, իսկ Կողմ 1-ը պարտավորվում է ըստ Պայմանագրի 1.1 կետում նշված ցանկին համապատասխան ակտիվացնել քարտերը և տրամադրել Կողմ 2-ին:

3.2. Կողմ 2-ը կարող է իր անվանական Քարտում առկա գումարի շրջանակներում կատարել գնումներ Երևան սիթի առևտրի օբյեկտներից:

4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Կողմերը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով իրենց պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը

5.1. Սույն Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է ան-հաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներից են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի

ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. Գաղտնիությունը

6.1. Պայմանագրի իմաստով գաղտնի է համարվում առկա կամ ապագայում ձեռք բերվելիք ցանկացած տեխնիկական, առևտրային, գիտական տեղեկության, ֆինանսական տվյալների և բանաձևերի, հաշվետվությունների վերաբերյալ տեղեկատվությունը, առևտրային, բանկային կամ ծառայողական գաղտնիք համարվող տեղեկությունները, մեխանիզմները, գործընթացները և ցանկացած ձևով արտահայտված տեղեկատվություն, որը կողմերին հայտնի է դարձել Պայմանագրի կնքման և կատարման ընթացքում, այդ թվում՝ Պայմանագիրը և դրա բովանդակությունը (այսուհետ՝ նաև ***«Գաղտնի տեղեկատվություն»***):

6.2. Կողմերը պարտավոր են միջոցներ ձեռնարկել ապահովելու Գաղտնի տեղեկատվության պաշտպանությունը՝ դրսևորելով անհրաժեշտ, ողջամիտ և բավարար ջանքեր՝ ապահովելու համար պաշտպանություն այդպիսի տեղեկատվության ապօրինի տարածումից, օգտագործումից և/կամ հրապարակումից: Կողմերը պարտավոր են Գաղտնի տեղեկատվությունն օգտագործել բացառապես Պայմանագրով նախատեսված նպատակների համար:

6.3. Պայմանագրի լուծման կամ դադարման դեպքում կողմերը պարտավոր են ձեռնպահ մնալ այնպիսի գործողություններ իրականացնելուց կամ այնպիսի անգործությունից, որը կարող է հանգեցնել Գաղտնի տեղեկատվության հրապարակմանը կամ երրորդ անձանց կողմից դրա ձեռքբերման մատչելիության առաջացմանը:

6.4. Սույն գլխով սահմանված պահանջների խախտումը հիմք է Կողմերի համար ՀՀ օրենսդրությամբ ու սույն պայմանագրով սահմանված պատասխանատվության առաջացման համար:

7. Վեճերի լուծման կարգը

7.1. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած ցանկացած վեճ լուծվում է բանակցությունների միջոցով: Բանակցությունների արդյունքում վեճը չլուծվելու դեպքում այն ենթակա է լուծման դատական կարգով:

8. Այլ պայմաններ

8.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից և գործում է անորոշ ժամկետով:

8.2. Պայմանագրում բոլոր փոփոխությունները և լրացումները վավեր են, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

8.3. Պայմանագրի շրջանակներում բոլոր գրությունների, տեղեկությունների փոխանցումը և ծանուցումները համարվում են պատշաճ, եթե դրանք ուղարկվել են փոստով կամ հանձնվել են առձեռն՝ ըստ Կողմերի՝ սույն պայմանագրում նշված տվյալների: Պայմանագրի գործողության ընթացքում Կողմերի կամ նրանցից որևէ մեկի հասցեի փոփոխման դեպքում Կողմերը պարտավորվում են այդ մասին ոչ ուշ, քան 5 (հինգ) օրվա ընթացքում տեղեկացնել միմյանց: Նման հաղորդման բացակայության դեպքում փաստաթղթերն ուղարկվում են նրանց վերջին հայտնի հասցեով և համարվում են հանձնված հասցեատիրոջը, թեկուզև հասցեատերն այդ հասցեում այլևս չի գտնվում:

8.4. Պայմանագրի յուրաքանչյուր կողմ պարտավորվում է պահպանել Պայմանագրի կնքման և կատարման հետ կապված բոլոր փաստաթղթերը, զեկույցներն ու հաշվետվությունները Պայմանագրի կնքման կամ կատարման հետ կապված վեճի լուծումից, Պայմանագրի լուծումից կամ Պայմանագրով սահմանված պարտավորությունների դադարման այլ հիմքերի ի հայտ գալուց հետո առնվազն երեք տարի:

8.5. Պայմանագրի որևէ դրույթի չի կարող տրվել այնպիսի մեկնաբանություն, որը պարտադրում է կողմերին ապրանքներ վաճառել կամ ծառայություններ մատուցել որևէ կոնկրետ կատեգորիայի անձանց կամ որևէ կոնկրետ կատեգորիայի անձանց տրամադրում է ՀՀ օրենսդրությանը հակասող արտոնություններ:

8.6. Պայմանագրի որևէ դրույթ չի կարող հիմք ծառայել Կողմերի միջև ծագած հարաբերությունները որպես համատեղ գործունեության հարաբերություններ որակելու և Կողմերից մեկի գործունեության արդյունքում ստացված շահույթի նկատմամբ մյուս կողմի իրավունքների առաջացման համար:

8.7. Պայմանագիրը բաղկացած է 5 էջից, կազմված է հայերենով, կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

8.8. Բանկային վճարման նպատակ դաշտում պարտադիր նշել՝ Կանխավճար կուտակային քարտին, համարը և գումարը փոխանցել սույն պայմանագրի 8-րդ կետում նշված հաշվեհամարին,

8.9. Պայմանագրի 8,8 կետում նշված պարտականությունը ոչ պատշաճ կատարելը, կհամարվի որպես կանխավճարի կատարում այլ նպատակով,

8.10. Կողմերը հավաստիացնում են, որ սույն պայմանագիրը կնքված չէ մոլորության, խաբեության կամ սպառնալիքի ազդեցությամբ և համապատասխանում է իրենց իրական մտադրություններին:

9. Կողմերի վավերապայմանները և ստորագրությունները

Կողմ 1	Կողմ 2
«Սիթի» ՍՊԸ	Ջրվեժի համայնքապետարան
Հասցե՝ք. Երևան Սեբաստիա 143	Հասցե՝գ.Ջրվեժ, Մելքոնյան 76
ՀՎՀՀ՝01282006	ՀՎՀՀ 03546091
Հ/Հ 1570032196540100	Հ/Հ 900102538072
«Ամերիաբանկ» ՓԲԸ	ՀՀ ֆին.նախ. ԿԳ

Տնօրեն՝ _____ Վ. Ֆարմանյան

Համայնքի ղեկավար՝ _____ Ն.Սանթրոսյան